ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 15 –Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վերապատրաստման, ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման կարգը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 174-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

12.02.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
2025 թվականի փետրվարի 12-ի
N 15 -Լ հրամանի

ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ) ոստիկանության ծառայողների վերապատրաստում, ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստություն և վերապատրաստում կազմակերպելու և անցկացնելու կարգը և պայմանները:

2.ՀՀ ՆԳՆ ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանության) ծառայողների մասնագիտական գիտելիքների հետևողական զարգացման, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների ուսումնասիրման, աշխատանքի առաջավոր փորձի կիրառման, գործնական հմտությունների և ունակությունների ձեռքբերման, ամենօրյա պրակտիկ գործունեության ընթացքում նրանց վարպետության կատարելագործման ու օպերատիվ-ծառայողական խնդիրների իրականացման նպատակով վերջիններս անցնում են վերապատրաստում:

3.Վերապատրաստման կազմակերպումը, մեթոդական ղեկավարումը և վերահսկումն իրականացվում է ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից հաստատված տարեկան ժամանակացույցի կամ ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունում ստացված հայտերի և միջնորդությունների հիման վրա:

4.ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվող վերապատրաստման արդյունքների հաշվառումը կատարվում է՝

1) հաշվառման էլեկտրոնային մատյանով (Ձև 1), որը լրացվում է տվյալ ոլորտի համար պատասխանատու գլխադասային կամ ինքնուրույն ստորաբաժանման կողմից.

2) «Կադրեր» էլեկտրոնային ինֆորմացիոն համակարգի միջոցով՝ ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունում.

3) վերապատրաստման վկայականով, որը տալիս է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը, և այն կցվում է ծառայողի անձնական գործին:

2. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5. Ոստիկանության ծառայողների համար նախատեսվող վերապատրաստման տեսակների ժամկետներն են՝

1) պարտադիր տարեկան վերապատրաստումն իրականացվում է ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչության կողմից մշակված և Նախարարի հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ ուսումնական պլաններով նախատեսված ժամկետներում, որոնք մշակում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը յուրաքանչյուր ոլորտի ծառայողների համար.

2) «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 6.1-ին մասով նախատեսված դեպքում Ոստիկանության պարեկային ծառայության (այսուհետ՝ Պարեկային ծառայություն) կրտսեր պարեկի, պարեկի և ավագ պարեկի, Պարեկային ծառայության կազմակերպման, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման, մոնիթորինգի, քրեաբանական վերլուծության ստորաբաժանումներում պաշտոնի նշանակվելու համար ծառայողները «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ նախնական մասնագիտական կրթության ժամկետով անցնում են վերապատրաստում՝ բացառությամբ պարեկային ծառայություն իրականացնող ստորաբաժանման կազմում գլխավոր խմբի, ավագ խմբի պաշտոններից բաժնի պետի տեղակալի, ենթակա ստորաբաժանում հանդիսացող Երևան քաղաքի գնդի հրամանատարի տեղակալների պաշտոններում նշանակվելու համար, որոնք անցնում են վերապատրաստում՝ 2 ամիս ժամկետով.

3) Պարեկային ծառայության ջրային ստորաբաժանումներում պաշտոնների նշանակվելու համար Պարեկային ծառայության ստորաբաժանման ծառայողներն անցնում են վերապատրաստում՝ 2 ամիս ժամկետով.

4) Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով և 10-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերում պաշտոնի նշանակումն իրականացվում է վերապատրաստում անցնելուց հետո, որի ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան.

5) Օրենքի 14.1-ին հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում մրցույթի արդյունքում պաշտոնի նշանակվելուց հետո ծառայողների վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան.

6) Պարեկային ծառայության կազմում դատական պաշտպանության, վարչական բողոքների քննության, վարչական վարույթի գործունեության համակարգման, վարչական

վարույթի իրականացման ստորաբաժանումներում, հետախուզական հատուկ խմբի և հերթապահ ծառայության պաշտոններում փոխադրման կարգով նշանակվելու համար ծառայողներն անցնում են վերապատրաստում՝ 1 ամիս ժամկետով.

7) Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան.

8) Ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համապատասխան այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշակվելու համար ծառայողների վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան.

9) Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան՝ մեկ ամսից ոչ պակաս, իսկ պարբերական վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան՝ տարեկան 80 ժամից ոչ պակաս:

6. Նախարարի հրամանով վերապատրաստում անցնում են նաև ոստիկանության բարձրագույն խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողները:

3. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7.ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 30-ը կազմում է հաջորդ տարվա վերապատրաստման ենթակա ծառայողների քանակական հայտը:

8.Վերապատրաստման ենթակա ծառայողների քանակական հայտի հիման վրա ՀՀ ՆԳՆ մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունը ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի հետ համատեղ մշակում է վերապատրաստման տարեկան ժամանակացույց, որը հաստատվում է Նախարարի հրամանով: Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ վերապատրաստման ժամանակացույցը կարող է փոփոխվել Նախարարի կողմից:

9.Սույն կարգի 8–րդ կետում նշված հրամանով հաստատված ժամանակացույցով նախատեսվում է վերապատրաստում անցկացնելու վայրը, սահմանվում են վերապատրաստման ենթակա ծառայողների շրջանակը՝ ըստ ծառայությունների և պաշտոնների, նրանց թիվը և ուսուցման ժամկետները:

10.Վերապատրաստման յուրաքանչյուր տեսակի համար ուսուցման կոնկրետ ժամկետները և բովանդակությունը որոշվում է ուսումնական պլաններով ու առարկայական թեմատիկ պլաններով, որոնք մշակվում են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և Ոստիկանության շահագրգիռ ստորաբաժանումների հետ համատեղ:

11. Վերապատրաստման ուսումնական պլանը հաստատում է Նախարարը, իսկ վերապատրաստման առարկայական թեմատիկ պլանը՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարը:

12. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ծառայողների վերապատրաստման հիմք է հանդիսանում վերջիներիս կողմից ներկայացված զեկուցագիրը՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացվող մրցույթին մասնակցելու համար:

13. Զեկուցագրին կից սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ծառայողները պետք է ներկայացնեն նաև «Բ» կարգի վարորդական վկայականը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ պարտավորագիր՝ վերապատրաստման դասընթացն սկսելու օրվանից 2 ամսվա ընթացքում համապատասխան կարգի վարորդական վկայական ձեռք բերելու վերաբերյալ:

14. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարի հրամանով դադարեցվում է Պարեկային ծառայության պաշտոնի նշանակման համար անցկացվող այն ծառայողի վերապատրաստումը, որը դասընթացն սկսելու օրվանից երկու ամսվա ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարին ուղղված զեկուցագրով չի հավաստել սույն կարգի 13-րդ կետում նշված վարորդական վկայականը ձեռք բերելու փաստը՝ դրան կցելով վկայականի պատճենը: Բացառիկ դեպքերում, սովորողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարը կարող է սույն կետում նշված երկամսյա ժամկետը երկարաձգել առավելագույնը մեկ ամսով: Սույն կետի պահանջը չկատարելու դեպքում ծառայողի վերապատրաստումը դադարեցվում է, և նա համարվում է վերապատրաստումը չավարտած:

15. Նախարարի որոշմամբ՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կարող են կազմակերպվել նաև վերապատրաստման տարեկան ժամանակացույցից դուրս վերապատրաստումներ, դասընթացներ, սեմինարներ, գործնական, սպորտային, մարտական և այլ տեսակի ուսումնական պարապմունքներ (այսուհետ՝ ուսումնական պարապմունքներ) ինչպես ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի նախաձեռնությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում գործող պետական տարբեր մարմինների ու կազմակերպությունների կամ միջազգային մարմինների, գործընկերների ու կազմակերպությունների կողմից:

16.ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստում անցնող ծառայողների գործնական պարապմունքները, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, Նախարարին հասցեագրված պատճառաբանված զեկուցագրի առկայության դեպքում կարող են անցկացվել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից դուրս:

17. Վերապատրաստման ենթակա չեն՝

1) այն ծառայողները, որոնք հեռակա ուսուցման ձևով սովորում են ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում (ուսումնաքննական հավաքի ժամանակահատվածում).

2) այն ծառայողները, որոնց Ոստիկանությունում ծառայության սահմանային տարիքը լրանալուն մնացել է 1 տարուց պակաս ժամանակ.

3) այն կին ծառայողները, որոնք գտնվում են հղիության և ծննդաբերության արձակուրդում, ինչպես նաև այն ծառայողները, որոնք գտնվում են մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում:

18. Ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համապատասխան այլ պաշտոնի կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշակվելու համար վերապատրաստմանը մասնակցող և չավարտած ծառայողները շարունակում են ծառայությունն զբաղեցրած պաշտոններում, իսկ սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված վերապատրաստումը չավարտելու դեպքում ՀՀ ՆԳՆ ղեկավարության կողմից քննարկվում է ոստիկանության ծառայողի զբաղեցրած պաշտոնում հետագա պաշտոնավարման հարցը:

19.Վերապատրաստման դասընթացներն ավարտած ծառայողին և սույն կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում տրվում է սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ՝ վկայականներ (Ձև 2 և Ձև 3):

20. Վերապատրաստման մասնակցող ծառայողների գործուղման և պետության կատարած ծախսերի փոխհատուցման գործընթացը կազմակերպվում է ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով:

21.Անհրաժեշտության դեպքում, Նախարարի հրամանով, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի առաջարկությամբ, ծառայողների վերապատրաստման դասընթացները կարող են կազմակերպվել հեռավար:

22.Վերապատրաստման մասնակցող ծառայողներն անհրաժեշտության և հնարավորության դեպքում ապահովվում են հանրակացարանով:

Ձև 1

Վերապատրաստման
հաշվառման էլեկտրոնային մատյան

_____

/ստորաբաժանման անվանումը/

Հ/Հ	ԱԱՀ	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Զբաղեցրած պաշտոնը և կոչումը	Ում կողմից է տրվել վերատատրաստման գործուղելու հրամանը, հրամանի համարը, օրը, ամիսը, տարեթիվը	Վերապատրաստման ժամկետները	Վերապատրաստման թեման	Նշումների համար

Ձև 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Սույն վկայականը տրվում է _____

_____

(պաշտոն, կոչում, անուն, հայրանուն, ազգանուն)

_____

_____

առ այն, որ նա _____

_____

(վերապատրաստման ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների սկիզբը և ավարտը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

անցել է վերապատրաստման դասընթաց

_____

(ուսումնական հաստատության անվանումը)

_____

_____

Հետևյալ առարկաներից (մոդուլներից) հանձնել է ստուգարքներ, դիֆերենցված ստուգարքներ և քննություններ

Հ/Հ	Առարկայի (մոդուլի) անվանումը	Ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների և քննությունների արդյունքները
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		
8.		
9.		
10.		

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

_____ _____

(ստորագրությունը) (անուն ազգանուն)

Կ.Տ.

«____ » _____ 20 թ.

Ձև 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանությունում համապատասխան
պաշտոնի նշանակվելու համար
վերապատրաստման

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Սույն վկայականը տրվում է _____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն)

_____

_____

առ այն, որ նա _____

_____

(վերապատրաստման ժամանակահատվածի կամ ժամանակահատվածների սկիզբը և ավարտը)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

անցել է վերապատրաստման դասընթաց

_____

(ուսումնական հաստատության անվանումը)

_____

_____

Հետևյալ առարկաներից (մոդուլներից) հանձնել է ստուգարքներ, դիֆերենցված ստուգարքներ և քննություններ

Հ/Հ	Առարկայի (մոդուլի) անվանումը	Ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների և քննությունների արդյունքները
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		
8.		
9.		
10.		

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

_____ _____

(ստորագրությունը) (անուն ազգանուն)

Կ.Տ.

«____ » _____ 20 թ.